# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՇԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Շենավան համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Շենավան,
Հեռ. (077)774131, (0252)95402,
shenavan.aragatsotn@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016 թվականի N 11-Ն

### ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶԻ ՇԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 25.11.2016Թ. ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ "Տիմ" օրենքի 12-րդ հոդվածի պահանջներով՝

*ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.*

Հաստատել ՀՀ Արագածոտն մարզի Շենավան համայնքի ավագանու 25.11.2016թ. նիստի օրակարգը:

1. ՀՀ Արագածոտն մարզի Շենավան համայնքի ղեկավարի աշխատավարձի չափը որոշելու մասին:
2. ՀՀ Արագածոտն մարզի Շենավանի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:
3. ՀՀ Արագածոտն մարզի Շենավան համայնքի 2017թ. տեղական տուրքերի և վճարների չափը հաստատելու մասին:
4. ՀՀ Արագածոտն մարզի Շենավան համայնքի 2017թ. բյուջեն հաստատելու մասին:
5. ՀՀ Արագածոտն մարզի Շենավան համայնքի ԽՀՀ անհատական ու քանակական կազմը հաստատելու մասին:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱԲԵԿՅԱՆ ԿԱՐԵՆ
2. ՄՈՎՍԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ
3. ՊԱՐՍԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ
4. ՍԱՀԱԿՅԱՆ ՀԱՅԿ
5. ՍԱՀԱԿՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ
6. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՏՅՈՄ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԱՆ ՓԻԼԻՊՈՍՅԱՆ**

**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ՀԵՆՐԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՇԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Շենավան համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Շենավան,
Հեռ. (077)774131, (0252)95402,
shenavan.aragatsotn@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016 թվականի N 12-Ն

### ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶԻ ՇԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "ՏԻՄ" ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ կետի պահանջներով՝

*ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.*

ՀՀ Արագածոտն մարզի Շենավան համայնքի ղեկավարի աշխատավարձի չափը սահմանել 225000 (երկու հարյուր քսանհինգ հազար) դրամ:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱԲԵԿՅԱՆ ԿԱՐԵՆ
2. ՄՈՎՍԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ
3. ՊԱՐՍԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ
4. ՍԱՀԱԿՅԱՆ ՀԱՅԿ
5. ՍԱՀԱԿՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ
6. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՏՅՈՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԱՆ ՓԻԼԻՊՈՍՅԱՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ՀԵՆՐԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՇԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Շենավան համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Շենավան,
Հեռ. (077)774131, (0252)95402,
shenavan.aragatsotn@mta.gov.am


## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016 թվականի N 13-Ն

### ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶԻ ՇԵՆԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "ՏԻՄ" ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ մասով ու 32-րդ հոդվածի 1-ին մասով և "Իրավական ակտերի մասին" ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով՝

*ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.*

Հաստատել ՀՀ Արագածոտն մարզի Շենավանի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելված 1-ի:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱԲԵԿՅԱՆ ԿԱՐԵՆ
2. ՄՈՎՍԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ
3. ՊԱՐՍԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ
4. ՍԱՀԱԿՅԱՆ ՀԱՅԿ
5. ՍԱՀԱԿՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ
6. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՏՅՈՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԱՆ ՓԻԼԻՊՈՍՅԱՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ՀԵՆՐԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՇԵՆԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2017 Թ. ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թիվը՝ 10
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

| Հաստիքի անվանումը | Հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը (հազար դրամ) | Տարվա համար (հազար դրամ) |
|---|---|---|---|
| Համայնքի ղեկավար | 1 | 225.0 | 2700.0 |
| Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 150.0 | 1800.0 |
| Համայնքային ծառայության պաշտոններ | | | |
| Աշխատակազմի քարտուղար 1.2-1 | 1 | 150.0 | 1800.0 |
| Առաջատար մասնագետ 3.1-1 | 1 | 140.0 | 1680.0 |
| Առաջատար մասնագետ 3.1-2 | 1 | 140.0 | 1680.0 |
| Առաջատար մասնագետ 3.1-3 | 1 | 140.0 | 1680.0 |
| Սպասարկող անձնակազմ | | | |
| Օպերատոր | 1 | 140.0 | 1680.0 |
| Մշակույթի տան տնօրեն | 0,5 | 90.0 | 540.0 |
| Հավաքարար | 1 | 90.0 | 1080.0 |
| Դռնապան | 1 | 70.0 | 840.0 |
| Ընդամենը/ամսեկան/ | 9.5 | | 15480.0 |

Շենավան համայնքի ղեկավար՝ Ա. Փիլիպոսյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՇԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Շենավան համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Շենավան,
Հեռ. (077)774131, (0252)95402,
shenavan.aragatsotn@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016 թվականի N 14-Ն

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶԻ ՇԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017Թ. ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ՈՒ ՎՃԱՐՆԵՐԻ ՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական տուրքերի ու վճարների մասին" ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի և "ՏԻՄ" ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետի պահանջներով՝

*ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.*

Հաստատել ՀՀ Արագածոտն մարզի Շենավան համայնքի 2016թ. տեղական տուրքերի ու վճարների չափերը՝ համաձայն հավելված N 1-ի:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱԲԵԿՅԱՆ ԿԱՐԵՆ
2. ՄՈՎՍԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ
3. ՊԱՐՍԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ
4. ՍԱՀԱԿՅԱՆ ՀԱՅԿ
5. ՍԱՀԱԿՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ
6. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՏՅՈՄ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԱՆ ՓԻԼԻՊՈՍՅԱՆ**

**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ՀԵՆՐԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

Հավելված N 1

1. Համայնքի տարածքում նոր կառուցվող օբյեկտների՝ շենքերի, շինությունների (ներառյալ ժամանակավոր) շինարարություն (շինարարական մոնտաժային աշխատանքներ) սկսելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

ա) հիմնական օբյեկտների համար՝ 10000 դրամ.

բ) մինչեւ 6 մ$^2$ տարածք զբաղեցնող ժամանակավոր (ոչ հիմնական) շինությունների համար՝ 3000 դրամ.

գ) 6 մ$^2$ եւ ավելի տարածք զբաղեցնող ժամանակավոր (ոչ հիմնական) շինությունների համար՝ 5000 դրամ:

2. Համայնքի տարածքում գտնվող օբյեկտները վերակառուցելու, ամրացնելու, արդիականացնելու, վերականգնելու, օբյեկտների արտաքին տեսքը փոփոխող այլ աշխատանքներ կատարելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում 6000 դրամ:

3. Համայնքի տարածքում գտնվող օբյեկտները քանդելու աշխատանքներ սկսելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 0 դրամ:

4. Համայնքի տարածքում ոգելից խմիչքների եւ (կամ) ծխախոտի արտադրանքի ընթացիկ տարվա համար վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից եւ ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչեւ 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչեւ 3000 դրամ,

բ. 26-ից մինչեւ 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչեւ 4000 դրամ,

գ. 51-ից մինչեւ 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչեւ 5000 դրամ,

դ. 101-ից մինչեւ 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչեւ 11000 դրամ,

ե. 201-ից մինչեւ 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչեւ 13000 դրամ,

զ. 501 եւ ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչեւ 15000 դրամ:

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչեւ 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչեւ 1000 դրամ,

բ. 26-ից մինչեւ 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչեւ 2000 դրամ,

գ. 51-ից մինչեւ 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչեւ 3000 դրամ,

դ. 101-ից մինչեւ 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչեւ 4000 դրամ,

ե. 201-ից մինչեւ 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչեւ 6000 դրամ,

զ. 501 եւ ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչեւ 15000 դրամ:

5. Համայնքի տարածքում բացօթյա վաճառք կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

ա) գազի եւ վառելիքաքսայուղային նյութերի համար՝ ընթացիկ տարվա համար՝ 50000 դրամ.

բ) գյուղատնտեսական մթերքների համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ 250 դրամ.

գ) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման եւ իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

հիմնական շինությունների ներսում՝

ա. մինչեւ 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մինչեւ 2000 դրամ,

բ. 26-ից մինչեւ 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մինչեւ 3000 դրամ,

գ. 51-ից մինչեւ 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մինչեւ 5000 դրամ,

դ. 101-ից մինչեւ 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար ՝ մինչեւ 10000 դրամ,

ե. 201-ից մինչեւ 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար ՝ մինչեւ 15000 դրամ,

զ. 501 եւ ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մինչեւ 20000 դրամ,

ոչ հիմնական շինությունների ներսում՝

ա. մինչեւ 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մինչեւ 500 դրամ՝

բ. 26-ից մինչեւ 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մինչեւ 800 դրամ,

գ. 51-ից մինչեւ 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մինչեւ 1000 դրամ,

դ. 101-ից մինչեւ 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար ՝ մինչեւ 2000 դրամ,

ե. 201-ից մինչեւ 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար ՝ մինչեւ 4000 դրամ,

զ. 501 եւ ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար ՝ մինչեւ 6000 դրամ:

6. Համայնքի տարածքում խաղատները, հանրային սննդի օբյեկտները, բաղնիքները (սաունաները), զվարճանքի օբյեկտները՝ ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

ա) խաղատների համար՝ 500,000 դրամ.

բ) շահումներով խաղերի կազմակերպման համար՝ 250,000 դրամ.

գ) բաղնիքների (սաունաների) համար՝ 200,000 դրամ.

դ) հանրային սննդի եւ զվարճանքի օբյեկտների համար՝ 50,000 դրամ:

7. Համայնքի տարածքում ընթացիկ տարվա համար արտաքին գովազդ տեղադրելու ըստ յուրաքանչյուր տեղի թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

ա) ծխախոտի արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 250,000 դրամ.

բ) այլ արտաքին գովազդի համար՝ 5,000 դրամ:

8. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ եւ կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 0 դրամ:

9. Համայնքի տարածքում (բացառությամբ՝ թաղային համայնքների) մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 10000 դրամ:

10. Համայնքի կողմից խմելու ջրի մատակարարման ծառայությունների համար յուրաքանչյուր շնչի համար ամսական 50 դրամ:

11. Համայնքի կողմից աղբահանության ծառայությունների համար յուրաքանչյուր տնտեսության հաշվով տարվա համար 1000 դրամ:

12. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Արագածոտն մարզի Շենավան համայնքի 18.12.2015թ. ավագանու N 12-Ն որոշումը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՇԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Շենավան համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Շենավան,
Հեռ. (077)774131, (0252)95402,
shenavan.aragatsotn@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016 թվականի N 15-Ն

## ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶԻ ՇԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017Թ. ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ Արագածոտն մարզի Շենավան համայնքի 2015-2018թ.զարգացման քառամյա ծրագիրը և ղեկավարվելով "ՏԻՄ" ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի ու "Բյուջետային համակարգի մասին" ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի պահանջներով՝

*ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.*

1. Հաստատել ՀՀ Արագածոտն մարզի Շենավան համայնքի 2017թ. բյուջեն՝ 42754600 (քառասուներկու միլիոն յոթ հարյուր հիսունչորս հազար վեց հարյուր) դրամ եկամտային և 67089400 (վաթսունյոթ միլիոն ութանասունինը հազար չորս հարյուր) դրամ ծախսային մասերով: Բյուջեի դեֆիցիտը 24334800 (քսանչորս միլիոն երեք հարյուր երեսունչորս հազար ութ հարյուր) դրամ ֆինանսավորել ազատ միջոցների հաշվին:
2. Համայնքի բյուջեի վարչական մասի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը 8000000 (ութ միլիոն ) դրամ ենթակա է ուղղման համայնքային բյուջեի ֆոնդային մաս:
3. Սոցիալական պաշտպանության բնագավառի ծախսերը կատարել համայնքի ղեկավարի կարգադրությունների համաձայն և կանխիկ դրամի վճարումը կատարել համայնքապետարանի դրամարկղի միջոցով:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱԲԵԿՅԱՆ ԿԱՐԵՆ
2. ՄՈՎՍԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ
3. ՊԱՐՍԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ
4. ՍԱՀԱԿՅԱՆ ՀԱՅԿ
5. ՍԱՀԱԿՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ
6. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՏՅՈՄ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԱՆ ՓԻԼԻՊՈՍՅԱՆ**

**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ՀԵՆՐԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՇԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Շենավան համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Շենավան,
Հեռ. (077)774131, (0252)95402,
shenavan.aragatsotn@mta.gov.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016 թվականի N 16-Ն

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՇԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՀՀ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԵՎ ՔԱՆԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 24.02.2011թ. N 164-Ն որոշումը և ՀՀ Արագածոտն մարզի Շենավան համայնքի ղեկավարի 01.11.2016թ. N 5-Ն որոշումը՝

*ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.*

Հաստատել ՀՀ Արագածոտն մարզի Շենավան համայնքի ԽՀՀ անհատական և քանակական կազմը.

| | | |
|---|---|---|
| Հովհաննիսյան Հենրիկ Արարատի | աշխատակազմի քարտուղար | - նախագահ |
| Ավագյան Արմինե Գևորգի | ուսուցչուհի | - քարտուղար |
| Սահակյան Հովհաննես Գալուստի | ավագանու անդամ | - անդամ |
| Սահակյան Հայկ Ազատի | ավագանու անդամ | - անդամ |
| Գրիգորյան Տարոն Հենրիկի | առաջատար մասնագետ | - անդամ |
| Գուլոյան Գոհար | Վորլդ Վիժն Ապարանի տարածքային գրասենյակի աշխատակից | - անդամ |
| Գալստյան Անահիտ Ժորայի | Ապարանի ՏԱԾ աշխատակից | - անդամ |

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱԲԵԿՅԱՆ ԿԱՐԵՆ
2. ՄՈՎՍԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ
3. ՊԱՐՍԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ
4. ՍԱՀԱԿՅԱՆ ՀԱՅԿ
5. ՍԱՀԱԿՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ
6. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՏՅՈՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԱՆ ՓԻԼԻՊՈՍՅԱՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ՀԵՆՐԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀՀ * ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՇԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ * 05200623 *